



«Մեր անունն շիտուս, սիրով Քո ճմիր սիրտն իմ բարեղեն»:

Սուրբ Ներսես Շնորհալի

# ՈՒՂԱԿԱՆ

## ՎՐԱՐԱՏՅԱՆ



ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅՈՒ ՄՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՄՍԱԹԵՐԹ

2024 թ., ՄԱՅԻՍ 5 (490)

## ՏՈՆ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ

«Իմաստությունը իր տունը չիներ, յոթը սյունների վրա այն կանգնեցրեց»:

Առակաց 9:1


Սուրբ Գրիգոր Լուսավորչի կյանքին քիչ թե շատ ծանոթ ամեն հայ գիտի, որ Հայաստան Աշխարհը քրիստոնեական կրոնին դարձավ և նրան պետական ճանաչում տվեց 301 թվականի աշնանը: Կարճ ժամանակ անց, 302 թվականի հունվարի 25-ի գիշերը, Գրիգոր Լուսավորչին իր նշանավոր տեսիլքն ունեցավ, որի մեջ տեսավ երկնքի բացվելը և երկնային լույսի առատահոս ծավալումը մեր աշխարհում, տեսավ հրեշտակների իջնելը և միախառնումը մեր ժողովրդի ծոցից ելած բազմաթիվ վկաների գնդին և, ի վերջո, տեսավ Աստծո Միածին Որդու իջնելը Վաղարշապատ քաղաքում, որ իր ձեռքում մի ոսկե ուռնակ բռնած արքունի պալատի մոտ Սանդարամետ կոչված գետնափոր մեխյանի գտնվելու վայրին գարկեց: Մեհենավայրը դարձավ տափարակ դաշտ, որի վրա մի հսկա ոսկե խարխուս դրվեց, և այդ ոսկե խարխուսի վրա կանգնեցվեց մի հրեղեն սյուն՝ գազաթին ամպե խոյակով ու խաչով, որը խորհրդանշում է Քրիստոսի հիմքի վրա կառուցված եկեղեցին: Եվ ահա, 302 թվականի գարնանը դրվեցին առաջին հիմքերը այն կաթողիկե տաճարի, որը պիտի կոչվեր Սուրբ Աստվածածին, բայց պատմությունը հետո այն պետք է վերանվաներ ԷԶՄԻԱԾԻՆ՝ Միածնի իջմանը կատարված նրա աստվածային հիմնադրությունը ընդմիջտ հիշելու համար:

Հետևաբար, մեկտեղվենք մտածելու եկեղեցու և նրա հիմնադրման մասին: Այս ուղղությամբ խորհելու տեղիք է տալիս նաև այսօրվա Առակաց Գրքի ընթերցմանը, որը սկսվում է ճիշտ այս բառերով. «Իմաստությունը չիներ»

իր տունը և կանգնեցրեց յոթը սյունների վրա»:

Անձնավորված իմաստությունը Քրիստոսու Ինքն է: Հին Կտակարանի գրքերի մեջ հաճախ կրկնվում է, թե. «Աստված ամեն ինչ իմաստությամբ

Կորնթացիս 1.24): Արդարև, Հայր Աստծո իմաստությունը ճանաչվում է որպես Քրիստոս, ինչպես որ մենք Ներսես Շնորհալիի գողտրիկ աղոթքով կրկնում ենք միշտ. «Իմաստությունն ընդ շիր շիտուս»: Հետ-



Էջմիածնի Սուրբ Տաճար

ստեղծեց» (Սաղմոս 103.24). «Իր իմաստությամբ երկինքը ստեղծեց» (Սաղմոս 135.5). «Իմաստությամբ երկրի հիմքերը դրեց» (Առակաց 3.19): Հետևաբար, իմաստությունն է ստեղծագործ գործությունը և ուժը, իմաստությունն է արարիչը երևելի և աներևույթ ամբողջ ստեղծագործության: Այս իմաստությունը Աստծո միակ պարզ հատկանիշը կամ ստորոգելին չէ, այլ՝ իմաստությունը ինքն Աստծո հետ է և ինքն Աստված է. ինչպես Հովհաննես Ավետարանիչը Իմաստություն կոչման փոխարեն ԲԱՆ կամ ԽՈՍԹ անվանումն է տալիս. «Աշխարհի ստեղծագործությունից առաջ Բանը (Խոսքն) գոյություն ուներ: Բանը (Խոսքը) Աստծո հետ էր և Բանը (Խոսքը) Աստված էր: Այն սկզբից էլ Աստծո հետ էր: Նրանով էր, որ Աստված ամեն ինչ ստեղծեց: Առանց նրա ոչ մի բան չստեղծվեց» (Հովհաննես 1.1-3): Պողոս Առաքյալը պարզորեն հայտարարում է, թե Աստծո փրկության կոչին անսացողների համար «Քրիստոս է Աստծո գործությունը և Աստծո իմաստությունը» (Ա

Լաբար, Քրիստոսի համար է Առակաց Գիրքն ասում. «Իր տունը չիներ»:

Ի՞նչ է այդ տունը: Աստվածորդին՝ հավիտենական Աստված և Հոր իմաս-

կել թագավորական հոգեղեն օրենքներին: Փրկության այս գործը երկրի վրա տևականացնելու համար Քրիստոս մի նոր տան հիմքեր դրեց՝ Իր տան, որի նյութեղեն դռները երկնքի հավիտենականության վրա են բացվում, որի աշխարհասփյուռ երդիկի տակ ամտուն մարդիկ երկնքի հովանավորություն են գտնում, որի շնորհածոր ավագանի ջրից մարդիկ նոր կյանքով են վերածնվում, որի փրկարար ձեթի օծումով մարդիկ մեղքի խորախոց վերքերից են բուժվում, որի սեղանի հաղորդությամբ մարդիկ երկնային անմահարար հաց են ճաշակում, և որի խաղաղ հարկի տակ իրենց հոգնաբեկ աչքերը փակելով՝ մարդիկ կհասնեն հավիտենական կյանքի դուռը:

Եկեղեցին է Իմաստության շինած տունը. եկեղեցին՝ ո՛չ որպես շենք, ո՛չ որպես փայտ կամ քար, այլ՝ եկեղեցին որպես Աստծով բնակված սիրտ ու միտք, եկեղեցին՝ որպես կենդանի հավատքի վկայություն, եկեղեցին՝ որպես անձեանձ

կության առիթով Հայաստանյայց եկեղեցու զավակներս պետք ունենք անպայմանորեն խորհելու և քննելու, թե մենք որպես մասնիկ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու և անդամներ Քրիստոսի Սուրբ եկեղեցու, որքանով ենք հավատարիմ Քրիստոսին, որ պատմության մեջ մի օր աշխարհ եկավ Իր տունը չիներու համար: Պետք ունենք խորհելու և քննելու, թե որքանով է Քրիստոսի եկեղեցին մեր մեջ կենդանի և կանգուն՝ հիմնված հավատքի և Սուրբ Հոգու շնորհների սյունների վրա, առանց որի Հայ եկեղեցին կդառնա իր բուն ինքնությունից պարզված գոյություն, կդադարի լինել «ծննդավայրը մեր հոգու, կդադարի լինել «մեր պապերի հավատքի բարձր բերդը», կդադարի «դեպի երկինք բարձրացող ճամփա» լինել և, ի վերջո, կդադարի լինել «Հայ հոգու և մարմնի գրահանդերձը փայլուն»:

Միածնաէջ և Աստվածահիմն Հայ եկեղեցու հանդեպ մեր հավատարմությունը այն ժամանակ կլինի ճշմարիտ և ամբողջական, երբ քարից և շենքից բացի այն մեզ համար կդառնա Աստծո հետ հանդիպման վայր, հավատքի ներշնչարան, հույսի վկայարան, սիրո վառարան, կամքի ջրղեղարան և, ի վերջո, կյանքի մատուցարան:

Այդ ժամանակ միայն ճշմարիտ իմացությամբ կկարողանանք երգել շարականագրի հետ. «Եկայք շինեսցուք սուրբ գիտարանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան Աշխարհի»:



Միածնի իջման վայրը

տությունը՝ Հիտուս, աշխարհ եկավ մեկ հիմնական առաքելությամբ, որն էր՝ Աստծուն ճանաչելի դարձնել մարդկանց և Աստծո թագավորությունը բերել աշխարհ, այսինքն՝ մարդկանց ազատել չարի տիրապետությունից և ենթար-

նեցված և սիրով գողված հույսի կամար, եկեղեցին՝ որպես իր միությունը գտած մի նոր ժողովուրդ, մարդկային կենդանի քարերով հյուսված կառույց ու շինություն...

...Սուրբ Էջմիածին կաթողիկե Սուրբ Տաճարի հիշատա-

Ձարեհ արքեպիսկոպոս ԱԶՆԱՎՈՐՅԱՆ



# ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

## ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՓՈՒՍՏՈՆ. «ԱԶԳ, ԲԱՆԱԿ, ԵԿԵՂԵՑԻ»



րարատյան Հայրապետական թեմի երիտասարդները մայիսի 4-ին մասնակցեցին «Ազգ, բանակ, եկեղեցի» խորագրով ինտելեկտուալ փառատոնին, մրցեցին հոգևոր ու աշխարհիկ, իմացական ու տրամաբանական հարցերի շուրջ, ձեռք բերեցին նոր գիտելիքներ: Փառատոնն անցկացվեց Սուրբ Երրորդություն եկեղեցու դահլիճում:

ԱՅՐԹ առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանի օրհնությամբ փառատոնը կազմակերպել էր թեմի երիտասարդաց միությունների հոգևոր խորհուրդը՝ հոգևոր հովիվ Տեր Պետրոս



ավագ քահանա Մայանի ղեկավարությամբ:

Տեր Պետրոսի խոսքով՝ սա այս տարվա երկրորդ փառատոնն էր, ավանդույթը շարունակվելու է, նախապատրաստում են ևս երկուսը:

«Փառատոնը նվիրված է մայիսյան հաղթական օրերին: Հատկապես երիտասարդների շրջանում հաղթական ոգին պետք է պահել: Պետք է շարժվել առաջ՝ հույսով, հավատով»,- նշեց հոգևորականը:

Երեք փուլից բաղկացած խաղին մասնակցեց 11 թիմ: Պայքարում երիտասարդները դիրքերը զիջել չէին շտապում: Ի վերջո, հավասար միավորներ հավաքելով՝ մասնակցեցին հավելյալ մրցույթի: Հաղթական գավաթը վերցրեց Նորք-Մարաշի Սուրբ Աստվածածին եկեղեցու «Գանձասար» թիմը: Երկրորդ տեղում Սուրբ Աննա և Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցիների «Գանձեր» թիմն էր: 3-րդ տեղը զբաղեցրեց Նոր Նորքի Սուրբ Աստվածածին եկեղեցու «Որդիք Լուսոյ» թիմը:

Հաղթողներին տրվեցին պատվոգրեր ու մրցանակներ: Խաղի համար հարց էր պատրաստել նաև գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանը:

## ԳՈՐԾՎՈՐ ԶՐՈՒՅՑ ԱՐՑԱՆԱՅՆՅԵՐԻ ԴԵՏ

Ամեն օր՝ երկուշաբթիից ուրբաթ, երևանի մանկական այգում հոգևոր սնունդ ստանալու ժամն է: Կաթողիկե Սուրբ Աստվածածին և Սուրբ Աննա եկեղեցիների հոգևոր հովիվ Տեր Զենոն քահանա Բարսեղյանը և խորհրդակատար Տեր Արսեն քահանա Սարոյանը արցախահայերի հետ զրուցում են հոգևորի Հայ Առաքելական եկեղեցու, Սուրբ Պատարագի և յոթ խորհուրդների մասին: Քարո-



զից հետո ներկաները ուղղում են իրենց հարցերը: Մեկ շաբաթ անց ամփոփում են զրույցը, և խումբը եկեղեցուն մասնակցում է Սուրբ Պատարագի:

Մայիսի 10-ին հերթական զրույցը մեկնարկեց աղոթքով: Տեր Զենոնը խոսեց հայրենիքը սիրելու, զննատեսչության և հայրենիքի համար պայքարելու անհրաժեշտության մասին: «Ծրագրի նպատակն է, որ արցախահայերը, բնականաբար նաև Հայաստանում ապրող հայերը լսեն Աստուծո խոսքը, նրանց ուղղորդենք, որ եկեղեցուն մասնակցեն Սուրբ Պատարագին: Քրիստոնյայի կյանքի իմաստն է՝ ճաշակել Տիրոջ Մարմինը և Արյունը: Նպատակ ունենք

այս ծրագիրն անցկացնել մարզերում և՛ ներգրավելով մյուս թեմերին, որպեսզի հոգևոր վերագործնք ունենանք ամբողջ հայոց աշխարհում»,- իր խոսքում նշեց տեր Զենոնը:

«Մի կտոր հաց բոլորին» բարեգործական ծրագիրը իրականացվում է «Հայը կա» սոցիալական անվտանգային և զարգացման հասարակական կազմակերպության հետ գործակցությամբ՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանի օրհնությամբ:

«Հայը կա» ՀԿ-ն ստեղծման մի քանի տարիների ընթացքում բազմիցս գործակցել է Արարատյան Հայրապետական թեմի հետ:

«Մի կտոր հաց բոլորին» ծրագիրը նպատակ ունի մարդկանց համախմբել մեր հավատքի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու շուրջ, հայ մարդու կյանքում բարձրացնելու եկեղեցու դերը՝ նպաստելով հավատքի ամրապնդմանը և զորացմանը: Մեր նպատակն է ազգային, հոգևոր և բարոյական արժեքների քարոզչության և ներկայացման միջոցով հոգեբանական աջակցություն ցուցաբերել ծրագրի շահառուներին»,- նշեց ՀԿ-ի փոխտնօրեն Վարդուհի Թովմասյանը:

Բարեգործական ծրագրի մեկնարկը տրվել է ապրիլի 29-ին: Ծրագրի ընթացքում զրույց-քննարկումներից բացի կազմակերպվում է նաև հյուրասիրություն, որը պատրաստվում է տեղում: Մինչ ներկաները լսում են հոգևորականի խոսքը, շրջակայքում տարածվում է արցախցի Ծովինարի հմուտ ձեռքերով պատրաստված ժենդալով հացի բույրը:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ «ՀԱՂՈՒՄՆԱԿ» ՀՈՒՐԶՈՐՅԱԼ ԽՆՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ

Մայիսի 12-ին Սուրբ Երրորդություն եկեղեցու Տիկնանց և Երիտասարդաց միությունների անդամները, կիրակնօրյա վարժարանի սաները եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Արարատ քահանա Օրդոյանի ղեկավարությամբ



այցելել են «Հաղթանակ» շուրջօրյա խմամբի կենտրոն: Կենտրոնի բնակիչներին իրենց միջոցառմամբ ոգևորել են կիրակնօրյա վարժարանի սաները:

Կենտրոնի հոգևոր պատասխանատու Տեր Արարատը ասաց, որ նման այցելություններն իրականացվում են պարբերաբար և հավելեց, որ հաճախ է զրուցում տեղի բնակիչների հետ, նրանք էլ մասնակցում են Սուրբ Պատարագի:

«Նպատակը բնակիչների հոգևոր կյանքն ակտիվացնելն է, նրանց հոգևոր գիտելիքներ տալը: Մեծ ուշադրություն են դարձնում նրանց հոգեբանական վիճակին: Փորձում են անել ամեն բան, որ իրենց չզգան մեկուսացված, հասարակությունից կտրված, անտեսված, չհայտնվեն հոգեբանական ծանր վիճակում: Նպատակ ունեն անել ամեն բան, որ նրանց ուղղորդեն դեպի Աստված»,- նշեց հոգևորականը:

Քահանայի խոսքով՝ այցելությունների ընթացքում փոփոխություններն ակնհայտ են, բնակիչները հանդիպումներին մասնակցում են ոգևորությամբ:

Միջոցառման ընթացքում ներկաներին տրվել է հոգևոր գրականություն, խաչեր: Ավարտին նրանք այցելել են Սուրբ Խաչ մատուռ-եկեղեցի՝ միասնական աղոթք բարձրացնելով առ Աստված:

## ԱՆՎԱԿԱՆՆԵՐ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆՆՔԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՅՈՂ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՅԱՆՔ

«Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցում մայիսի 13-ին մեկնարկեց մշակութային միջոցառում, որը սկսվեց աղոթքով և Նորք-Մարաշի Սուրբ Աստվածածին եկեղեցու խորհրդակատար Տեր Զգոն քա-

հանա Աբրահամյանի օրհնությամբ:

Հոգևորականը դպրոցի սաների հետ խոսեց սիրո, բարության, միմյանց կարեկցելու ու աջակցելու կարևորության մասին:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի սաները իրենց կատարումներով ներկաներին սեր ու ջերմություն փոխանցեցին:

Տեր Զգոնը իր խոսքում կարևորեց նման միջոցառումների անցկացումը՝ հույս հայտնելով, որ երեխաների համար անակնկալներ մատուցելու օրինակը վարակիչ կլինի մարդկանց համար:

«Որոշեցինք երեխաներին փոխանցել մեր բարի խոսքը, որպեսզի իրենց կյանքը շարունակեն հույսով, հավա-



տով՝ վստահ լինելով, որ անտեսված չեն, Աստված իրենց հետ է: Այդպես պետք է վարվենք մեր ողջ կյանքի ընթացքում՝ միմյանց ուրախություն պարգևելով, հոգատար վերաբերմունքով, ջերմությամբ, բարի անակնկալներով»,- նշեց քահանան:

Միջոցառման ավարտին քահանայի կողմից օրհնված խաչեր ընծայվեցին երեխաներին:

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՆՎԻՐԱՑՆԵՐ ՆԵՐՍԵՍ ՀՆՈՐԴԱԼՈՒ ՄԱՅՎԱՆ 850-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Մայիսի 14-ին Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան թիվ 135 դպրոցում ներկայացվել է Սուրբ Ներսես Շնորհալի հայրապետի վարքը, նրա թողած հարուստ գրական ժառանգությունը: Միջոցառումը նվիրված էր հայրապետի մահվան 850-րդ տարելիցին: Ցերեկույթի շարժառիթը Ներսես Շնորհալու հանելուկների թարգմանությունն էր՝ հայերենից չինարենի: Այն նախաձեռնել էին Արշակ և Գևորգ Մաղոյանները:

Հանդիպմանը հրավիրված էին Նոր Նորքի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Աշոտ քահանա Սաֆարյանը և Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Նորայր քահանա Բաղասարյանը:

Միջոցառումը մեկնարկեց աղոթքով: Տեր Աշոտը իր խոսքում կարևորեց նման հանդիպումների անցկացումը:

«Այս անդրադարձով չին ընթերցողը կարող է պատկերացում կազմել հայ ժողովրդի ինքնություն կերտած նշանավոր անձանց մասին՝ Դավիթ Անհաղթ, Գրիգոր Լուսավորիչ: Ներսես Շնորհալու ժառանգությունը լիովին բա-



ցահայտված չէ լայն հասարակության համար: Շատերը չգիտեն, որ սուրբ Ներսես Շնորհալին է բարեգործել մեր Սուրբ Պատարագը, ժամերգությունները: Բազմաթիվ են տաղերն ու մեղեդիները, որ երգվում են Սուրբ Պատարագին: Արևազալի ժամերգությունը, իր երաժշտական հատվածով, Շնորհալու մտքի արգասիքն է»,- նշեց քահանան:

Միջոցառմանը ներկայացվեցին հատվածներ Հայոց մեծ մտածողի ստեղծագործություններից:

Էջ 2

«ԶՈՐԱՎՈՐ» ԱՎԵՏԱՐԱՆԸ ԲԵՐՎԵԼ Է ԶՈՐԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱՍՏՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ

Ավանդույթի համաձայն՝ մայիսի 14-ին ԱԶԹ առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ Երևանի Մետրոպոլիտոսի անվան Մատենադարանից Ջորավոր Սուրբ Աստվածածին Եկեղեցի բերվեց «Ջորավոր» Ավետարանը՝ ի հիշատակ Մովսես Տաթևացի կաթողիկոսի:

Ուխտի Սուրբ Պատարագը մատուցեց Ջորավոր Սուրբ Աստվածածին Եկեղեցու խորհրդակատար Տեր Վահան քահանա Առաքելյանը: Մինչև քարոզը տեր հայրը հոգևոր դասի և համայնքի անունից շնորհակալություն հայտնեց ԱԶԹ առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանին, ում հայրական օրհնությամբ հավատավոր հայորդիները տարվա մեջ մեկ անգամ իրենց խոնարհումն ու երկրպագությունն են բերում «Ջորավոր» Ավետարանին:



Քարոզին տեր հայրն անդրադարձավ նաև խնդրակատար և հրաշագործ Ավետարանի գործնական ու ասաց. «Ջորավոր Ավետարանը նշանավոր է ոչ թե իր գեղագիտական արժեքով, այլ նախ և առաջ Ավետարան լինելով և իր հրաշագործ գործությամբ: Այն շնորհաշատ մի պարզ և մեզ մահկանացուներին, որպեսզի Աստծու օրհնությամբ հաղորդակից լինենք: Կարևորելով մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ավետարանը՝ մենք հաղորդ ենք դառնում Լույսին և մերժում ենք խավարը: Երբ Աստծու խոսքերը կյանքի են կոչվում, կյանքը գեղեցկանում և լուսավորվում է, որովհետև ավետարանական պատգամները մարդուն փրկություն են պարգևում, ազատագրում մեղքերից, մարդկանց միջից վերացնում թշնամական խորհուրդները

և սեր տարածում մարդկանց միջև»:

Սուրբ Պատարագի ավարտից մինչև երեկոյան ժամերգությունը եկեղեցի ուխտի եկած բազմաթիվ հավատացյալներ հաղորդակից եղան կեսհազարամյա զորավոր պատմությամբ հայտնի «Ջորավոր» Ավետարանին:

14-րդ դարից առ այսօր Հայոց ազգը հաղորդակից է լինում իր գործությամբ և հրաշագործությամբ հայտնի «Ջորավոր» Ավետարանին, որ նախկինում կոչվել է «Վիշապկենց»: Դարերի ընթացքում Ավետարանը հանգրվանել է Երևանի Երկուեղեցիի և Ջորավոր Սուրբ Աստվածածին Եկեղեցիներում, Արտագի Սուրբ Թադեոսի վանքում, այսօր Սուրբ Էջմիածնում, իսկ 1939-ից՝ Մաշտոցյան Մատենադարանում: 73 տարվա դադարից հետո արդեն իններորդ տարին է, որ հավատավոր հայորդին տարվա մեջ մեկ օր մայիսի 14-ին՝ Մովսես Գ Տաթևացի հայրապետի (1629-1632 թթ.) մահվան հիշատակության օրը, հնարավորություն ունի հաղորդակցվելու «Ջորավոր» Ավետարանի օրհնությամբ Ջորավոր Սուրբ Աստվածածին Եկեղեցուն:

ԱՆԻՆ՝ ԴԱՍՏԱԿԱՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ԱՐԿԵՏԱԳԵՏՆԵՐԻ ԱՉԲԵՐՈՎ

Ընթերցողների սեղանին է պատմական Հայաստանի մայրաքաղաքներից Անիի մասին պատմող նոր պատկերազարդված Այն կոզնի ուսումնասիրել 1001 եկեղեցիների քաղաքը, տեսնել Անին դասական ու ժամանակակից նկարիչների վրձնով:

«Անի» պատկերազարդված տպագրվել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ: Ծրագրի կազմակերպիչներն են ԱԶԹ-ն ու «Աշխարհի հայ նկարիչների միավորում»-ը:

Գրքում տեղ են գտել արխիվային լուսանկարներ, քաղաքը ներկայացնող նյութեր, ստեղծագործություններ: Ընթերցողը կարող է ծանոթանալ քաղաքի պատմությանը, ճարտարապետությանը, վանքերին: Գրքի վերջում տեղ են գտել նաև տեղի խոհանոցից բաղադրատոմսեր: Դրանք տրամադրել է «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» հասարակական կազմակերպությունը:

Պատկերազարդի խմբագրի՝ Անահիտ Մխիթարյանի խոսքով՝ գիրքը ստեղծվել է երկար տարիների աշխատանքի արդյունքում:

«Ձեռք ենք բերել տեղեկատվություն, որտեղից հնարավոր է արխիվներից, տարբեր պատմաբաններից: Այն դարձել է գիտական արժեք ունեցող գիրք», - նշեց Անահիտ Մխիթարյանը:

Նախածանուցումը սկիզբ է առել տարիներ առաջ՝

նվիրված քաղաքի հիմնադրման 1050-ամյակին, նշեց «Աշխարհի հայ նկարիչների միավորում» ղեկավար և գրքի տեխնիկական խմբագիր Ղազար Միրզոյանը:

«15 նկարիչների հետ զննարկել ենք Անի քաղաքը: Նկարիչներն այնտեղ էտյուդներ արեցին: Հետո նկարեցին արդեն մեծ կտավների վրա: Բացեցինք ցուցահանդես, նաև որոշեցինք պատկերազարդված տպագրել, սակայն որոշ պատճառներով տպագրումը հետաձգվեց», - ասաց նա:

Ներշնչանքով ստեղծված գործերը տարբեր ոճերի ու գույների, այժմ զարդարում են պատկերազարդված: Նախ ներկայացված են դասական նկարիչների աշխատանքները՝ Բաշինջաղյան, Սուրենյանց, Գառզու: Երկրորդ բաժնում ժամանակակից նկարիչների գործերն են:

«Ճանապարհորդությունը շատ հետաքրքիր էր: Մայլ եղանակ էր, մեզ անգամ թվաց չենք կարողանա անել այն,



ինչ ցանկանում ենք, սակայն սահմանն անցնելուց հետո՝ արև բացվեց: Այնպես էինք տպավորվել: Այնտեղ լսվում էր մեր Պատարագի ձայնը, իսկ մյուս կողմից՝ թուրքական մուլանդ: Որոշ նկարիչներ Անին տեսան կարմիր, կանաչ, գորշ գույներով, ոմանք պատկերեցին գունավոր: Ստեղծված աշխատանքները իրարից շատ տարբեր են: Նկարիչները տարբեր գույներով զգացին Անին», - պատմեց Անահիտ Մխիթարյանը:

Դասական նկարիչների բաժնի նյութերը տրամադրվել են Հայաստանի ազգային պատկերասրահը, Մարյանի տուն-թանգարանը, Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ: Որոշ լուսանկարներ տրամադրվել է Օրբելի եղբայրների տուն-թանգարանի կողմից:

Արարատյան Հայրապետական թեմի տեղեկատվական բաժին

ՀՈՒՆԻՍ 1

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ԵԼՔԸ ՎԻՐԱՊԵՏ

այ պատմագրությունը՝ հանձինս Ազգաբնակչության և այլ պատմիչների, հանգամանորեն լուսաբանում է սուրբ Գրիգոր Լուսավորչի տառապանքներով, բայց և հրաշքներով, տեսիլքներով ու հաղթություններով զարդարված ուղին:

Ըստ ավանդության՝ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն դառնալու իրողությունը սերտորեն կապվում է սուրբ Հռիփսիմյանց 37 կույսերի նահատակության հետ: Վերջիններս, Հռոմի Դիոկղետիանոս կայսրի հալածանքներից փախչելով, ապաստան են գտնում Վաղարշապատ մայրաքաղաքին կից հնձաններում:

Տրդատ թագավորը, Հռիփսիմի գեղեցկությունից հմայված, ցանկանում է ամուսնանալ նրա հետ, սակայն մերժվելով, հրամայում է անխտիր բոլորին տանջամահ անել: Բայց «պարկեշտ ու Սուրբ Հռիփսիմեանց» նահատակությունը անհետևանք չանցավ. կորովի արքան ընկավ «խոր տխրության և անտանելի տրտմության մեջ»: Հռիփսիմի լուսավառ գեղեցկությունը տանջում էր Տրդատի սիրտ տենչով խանձված հոգին: Խղճի տագնապը խռովվում էր ամբողջ երկրում: Եվ մի օր էլ, որտորության ժամանակ «սկսեց մոլեգնել և մարդկային բնության դուրս գալով՝ վայրենի խոզերի կերպարանքով, իբրև նրանցից մեկը՝ գնաց նրանց մեջ բնակվելու» (Ազգաբնակչության): Այսպիսով, թագավորի հոգեկան ծանր ապրումները ծնունդ են տալիս

խոզակերպություն կոչվող հիվանդության: Այդ դեպքից որոշ ժամանակ անց թագավորի թույլը՝ Խոսրովիդուխտը, տեսիլք է տեսնում, որով Աստված հայտնում է, թե միայն խոր վիրապում բանտարկված Գրիգորը կարող է բժշկել իր եղբորը:



Խոսրովիդուխտը, երբ այդ տեսիլքը պատմում է պալատականներին, նրանք անհեթեթություն են համարում 13 տարի մահապարտների ստորերկրյա բանտում Գրիգորի կենդանությունը և փոխանակ հավատալու, սկսում են ծաղրել: Խոսրովիդուխտ արքայաբոջ պնդումներից հետո

նախարարներից Օտային ուղարկում են Արտաշատ քաղաք՝ Գրիգորին վիրապից դուրս հանելու:

Երբ ժամանում են հիշյալ վայրը ու երկար ու հաստ պարանները ներքև իջեցնում, հանկարծ, ի զարմանս ներկաների, «մեկը» բռնեց այն, և նրանք «վեր հանեցին ու տեսան, որ նրա մարմինը թխացել էր, ստույգի մեջ սևացել: Իսկույն հանդերձներ հագցրին և խնդությամբ Արտաշատ քաղաքից առան-զնացին Վաղարշապատ քաղաքը»:

Գրիգորը, երբ տեսնում է ցավազար Տրդատին, խորապես հուզվում է և, ծնկի գալով, սկսում սրտեռանդ աղոթել: Այս տեսարանը ցնցող տպավորություն է թողնում թագավորի վրա. ինքն ու նախարարները նույնպես ծնկի են գալիս Գրիգորի առջև և արցունքոտ աչքերով ասում. «Խնդրում ենք, ների մեզ մեր հանցանքները, որ գործեցինք քո դեմ»: «Ես էլ ձեզ մեծ մարդ եմ, - պատասխանում է Գրիգորը, - դուք ճանաչեք ձեր Արարչին՝ երկնքի և երկրի ստեղծողին, և ա՛յնքանով է ձեզ բժշկել»:

Վաղարշապատում Գրիգորը, նախ ամփոփում է նահատակ կույսերի աճյունները ու երեք վկայարաններ կառուցում, ապաշխարության համար սահմանում հնգօրյա պահք, որն այսօր էլ պահպանվում է Հայ եկեղեցուն և կոչվում «Առաջավորաց»: Ապա շուրջ 66 օր քրիստոնեության ուսմունքն է քարոզում և աղոթքներով բժշկում թագավորին: Թագավորը և ամբողջ արքունիքը քրիստոնյա են

դառնում՝ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելով 301-ին:

Կապաղովկայի մայրաքաղաք Կեսարիայում, որպես Հայոց կաթողիկոս օծվելուց հետո, հայրապետը սկսում է կերտել իր կոչմանը հավատարիմ ուղին. քանդվում են մեխյաններն ու կռապաշտական հուշարձանները, կառուցվում եկեղեցիներ, հիմնվում դպրոցներ, ձեռնադրվում են հայրապետի եպիսկոպոսներ ու քահանաներ: Նորընծա հայրապետը Արածանիում շքեղ հանդիսավորությամբ մկրտում է Տրդատին, Աշխեն թագուհուն, Խոսրովիդուխտին և ժողովրդին: Մկրտությունից անմիջապես հետո Գրիգոր Լուսավորիչը մատուցում է բացօթյա Սուրբ Պատարագ և բոլորին հաղորդակից դարձնում այդ Սուրբ Խորհրդին:

Տրդատ թագավորի բժշկությունից երկու ամիս անց Գրիգոր Լուսավորչին հայտնվում է Միածին Փրկիչը՝ լույսերի մեջ երկնքից իջնելով: Աստվածային հրաշալի տեսիլքով Լուսավորչին ցույց է տրվում Մայր Տաճարի հիմնադրման վայրը: Տերը պատգամում է սուրբ Հռիփսիմյանց կույսերի նահատակման վայրերում վկայարաններ կառուցել:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ վիրապից ելնելու տոնը Հայ եկեղեցին տոնում է սուրբ Հռիփսիմյանց և սուրբ Գայանյանց տոներին հաջորդող և Սուրբ Էջմիածնի տոնին նախորդող շաբաթ օրը: Այդ օրը բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ:

ԳՐԱՆԿՅՈՒՆ

ԼԱՎ ԳԻՐՔ ԿԱՐԴԱԼԸ
ԳԵՂԵՑԻԿ ՈՒ ՄԵԾ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ Է

«Հողակն Արարատյան» ամսաթերթի գրուցակիցը բանաստեղծ Ռազմիկ Գրիգորյանն է:

Լ՛ թարգմանական գրականությունն է բազմազան, և՛ ժամանակակից գրականությունը, որը դրական երևույթ են համարում: Ինձ

2. Գրքեր, որոնց բովանդակության բացակայությունը փորձ է արվում ծածկել գովազդով:

-Տատանումների ու հապաղումների մասին...

-Բառը և բանաստեղծը...
«Ակզբից էր Բանը, և Բանը Աստծու մոտ էր, և Բանը Աստված էր» (Հովհաննես Ա 1): Այսինքն՝ Աստված խոսքով ստեղծեց աշխարհը, խոսքը տվեց մարդուն, և վերջում Աստծո խոսքը մարմին առավ Քրիստոսով: Բառը ունի մոգական հատկություն, որը լավագույն կերպով բացահայտվում է հենց բանաստեղծների միջոցով: Բանաստեղծի մեծությունը ինձ համար չափվում է նրանով, ինչով բառը ավելին է դառնում, քան բառ: Օրինակ՝ Վահան Տերյանի, Եղիշե Չարենցի, Ռայմեր Մարիա Ռիլկեի, Սեն-Ժոն Պերսի բանաստեղծություններում բառը իր մոգականությամբ դեպի աղոթք է ձգտում ու երբեմն այդպիսին էլ դառնում է: Բառերը նույնպես ոգի ունեն, ու բառի ոգին հենց ինքը բանաստեղծությունն է:



Ռազմիկ Գրիգորյան

համար այսօր ծնվող գրքերը բաժանվում են երկու տեսակի.

1. Գրքեր, որոնք մրցում են իրենց բովանդակությանը:

-Խաղաղություն որոնելիս...
-Խաղաղությունը նախառաջ ճանապարհորդություն է դեպի ներս ինքդ քեզ հանդիպելու համար, և եթե այդ հանդիպումը տեղի է ունենում ներսում, դրսում խաղաղության հասնելը ավելի հեշտ և իրատեսական է դառնում: Օրինակի համար նայե՛ք մեր հերոսներին: Իր ներսում այդ խաղաղությանը հասել էր Մուշեղ Մամիկոնյանը, երբ ճակատամարտերից մեկի ժամանակ գերեվարում է Շապուհի կանանցը և առանց անարգելու՝ վերադարձնում պարսից արքային: Այդ խաղաղությանը իր ներսում հասել էր Գարեգին Նժդեհը, երբ իր զինվորներին ասում էր. «Եղե՛ք անխնայ ձեր դիմադրողների նկատմամբ, ասպետ և մարդ եղե՛ք կանանց, երեխաների ու ծերերի նկատմամբ»: Այդ խաղաղությանը իր ներսում հասել էր Դուշման Վարդանը, ով ասում էր. «Իմ պատերազմում կանայք ու երեխաներ չպետք է զոհվեն...»: Այսինքն, այն մարդը, որ ներսում հասել է խաղաղության, կարող է դրսում այդ խաղաղությունը պարտադրել անգամ, հարկ եղած դեպքում:

-Եվ, այնուամենայնիվ, հավատում եք...
-Ես հավատում եմ հոգևոր զարթոնքին, սեփական պետությանը և պետականությանը, լուռ զինվորագրված հային, որը բաց ճակատով կկարողանա կանգնել Նարեկացու և Կոմիտասի հիշատակի առջև:

-Ի՞նչ կմաղթեք մեր ընթերցողներին:
-Ընթերցողներին կմաղթեմ երբեք, ոչ մի պարագայում չհարածարվել իրենց հոգևոր ընկերոջից՝ գրքից, որովհետև լավ գիրք կարող է գեղեցիկ ու մեծ առաքիլություն է:

Պատրաստեց Սիրանուշ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆԸ

ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ, ՍԻՐՈՒ ԵՎ ԳԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եվ արդ, որովհետև աստվածային կերտվածքի սկիզբն այսպես եղավ, ե՛կ, ո՛վ վսեմդ, քննենք Հիսուս Քրիստոսի հիմքի վրա կառուցվող բարձր աշտարակներն ու բոլոր բարի շինվածքների գլուխը՝ սերը, գուրջը և ողորմությունը: ...Գրված է. «Աստված սեր է»: Եվ ով աննենգ սիրում է Աստծուն, ընկերոջը և աղքատին, նա բնակվում է Աստծո մեջ, և Աստված՝ նրա մեջ, և ըստ իր կարողության նմանվում է Աստծուն: Եվ մի այլ տեղ ասում է. «Սիրի՛ր քո ընկերոջը, ինչպես քո անձը»: Եվ Տերը հրամայում է. «Նոր պատվիրան են ձեզ տալիս, որ սիրեք միմյանց, ինչպես որ ես սիրեցի ձեզ և իմ անձը դրեցի ձեր փրկության համար»: Այս է կատարյալ սերը: Քանզի եթե չես կարող սիրել եղբորդ, որին տեսնում ես, ինչպե՞ս կսիրես Աստծուն, որին չես տեսնում: Քանզի մարդիկ ընկերասեր մարդուն աստվածասեր են կոչում: Դրա համար էլ Տերը քաջալերում է՝ ասելով. «Եղե՛ք գթասիրտ, ինչպես որ գթասիրտ է ձեր երկնավոր Հայրը», իսկ առաքյալն ասում է. «Ձգեստավորվե՛ք գթասրտությամբ և ողորմությամբ», որովհետև Աստծո Դատաստանին ո՞վ կպարծենա բարձրագույն: Եվ դարձյալ ասում է. «Եթե բոլորի համար բարիք գործեն և սեր չունենան, ապա իզուր են ջանում»: Նաև սքանչելի էսայիին է գոչում. «Տար՛ աղքատին անհարկի քո տուն՝ գթասրտությամբ, սիրով և ողորմածությամբ տալով նրան քո հավաքած հացի ավելցուկը, և ահավոր Աստվանում նախօրոք կծագի քո լույսը, և չի հանգչի քո լապտերը»: Դավիթն էլ գոչում է. «Երանի՛ նրան, որ խնամում է աղքատին, որովհետև դատաստանի Օրը

Տերը կփրկի նրան անսահման չարից»: Եվ Տերը բարձրագույն հրամանով ասում է. «Երանի՛ ողորմածներին»: Որովհետև երբ անաչառ Աստվանի սուսկալի բեմի առաջ անեն ոք օգնության կարիք զգա, նա ողորմություն կգտնի՝ մեծ պարծանքով մեկի դիմաց հարյուրը ստանալով: Եվ աղքատները պայծառ ջահերով նրան կշրջապատեն և կգովեն նրան Դատավորի առաջ, որովհետև իմաստուն վաճառականի պես տվեց անցավոր ունեցվածքը և գնեց այս անգին մարգարիտը: Ապա հիրավի հրամայում է Տերը. «Ձեզ համար բարեկամներ արե՛ք անիրավ մամոնայից»: Աստծուն և աղքատների դասերին տալով՝ երկնքում դիզեք զանձը, որ ապահով մնա գողերից ու ավազակներից: «Գիտե՛մ, - ասում է,- որ հույժ սիրում եք քսակն ու արծաթը և կամենում եք պինդ պահել այն: Ես ցույց կտամ ձեզ պահելու կարգը. աղքատների միջոցով առաքեցե՛ք վեր՛ դեպի Հոր առազաստը՝ ուր չի կարող մտնել գողը, և ցեցը՝ ապականել»: Նա՛ է սիրում իր զանձը, ով հանդերձալում է պահում այն, և ոչ թե նա, ով թաղեց այն հողի մեջ, իսկ ինքը առանց պաշարի գնաց դատավորի մոտ: Եվ հիրավի Տերն աշխարհի ունեցվածքը՝ «անիրավ մամոնա» է անվանում, քանզի թողեցինք մեր ժառանգությունը, որ դրախտն էր, և անիրավության պատճառով հափշտակվեցինք անասունների այս աշխարհը: Տերն ասում է. «Սուտ և օտարոտի բաներով եք կանենում ետ գնել ձերը, որն անվախճան հանգիստն է: Դո՛ւք գիտեք, բայց դեռ շատ եք անօգուտ ապաշավելու: Արդ, ձեզ հա-

մար բարի անուն վաստակեցե՛ք, քանի որ աղքատները ողորմածին Աստված են կոչում և ասում. «Այս ինչ բանը Աստված պարգևեց ինձ»: Գրված է. «Երանի՛ նրան, որ իր հացը ուտում է ամենայն ջրերի վրա»: Ողորմությունն արագաթև արծիվ է, երբ սիրով և գթասրտությամբ է արվում: Հիշի՛ր նաև հարուստին, թե ինչպես էր չարաչար տանջվում, որին հանդիմանեց Աբրահամը և մի կաթիլ ջրի անգամ չարժանացրեց նրան: Ահեղ Աստվանում նույնպես Դատավորը կասի անողորմներին. «Հեռացե՛ք Ինձնից և մտե՛ք սատանայի կրակի մեջ, որովհետև նմանվեցիք նրա անողորմ բարքին և կարող եք հավիտյան միասին բնակվել: Ես ողորմած եմ, իսկ դուք՝ անողորմ. ինչպե՞ս կարող եք դուք բնակվել Իմ առազաստում, քանզի օրենք չէ, որ թշնամիներին բերեն Իմ առազաստը: Իմ գուրջը, որը դուռն է Իմ անմահ հարսանիքի, փակվեց ձեր առջև և չտարածվեց ձեր վրա, քանի որ քաղցեցի, և Ինձ ոչինչ չտվեցիք ուտելու» և այլն:

մերկ աղքատների հետ շրջում է մեր դռների մոտ: Եվ արդ, ողորմենք մեր անձերին և չանտեսենք Նրան: Նաև աղքատը, որը մուրում է, կարող է ողորմություն անել, եթե կամենա. և այն Աստված ավելի մեծ է համարում, որովհետև չունեցածից տվեց, քան հարուստինը, որն ավելորդից տվեց: Այն այրի կինը, որը սիրով երկու խերևեշ գցեց գանձանակը, առավել գովաբանվեց Քրիստոսի կողմից, քան հարուստները, որոնք ավելի շատ զցեցին: Իսկ եթե բնավ ոչինչ չունես, դու լա՛ց եղիր և ապաշխարի՛ր նեղված եղբորդ համար: Մի բաժակ ջուր կարող ես տալ, կարող ես այցելել հիվանդին: Արդ, այս ամենն Աստված կընդունի՝ որպես մեծ ողորմություն, թեպետև քեզ փոքր է թվում, որովհետև Աստված միայն ըստ կարողության է խնդրում. ուն շատ տվեց, շատ է պահանջում նրանից, իսկ աղքատից մի փոքր՝ խոսքով հնազանդվել, ապաշավել, հոգով և մարմնով սուրբ լինել:

Եվ եթե այսպես անենք այս կյանքում, մեր վարձքը Աստծո կամքով կլինի, և Նրա մյուս անգամ Գալստյան ժամանակ Նրա աջակողմյան դասին արժանավոր կլինենք մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհներով և մարդասիրությամբ, Որին վայել է փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից ամեն:

Աղբյուրը՝ Վարդան Այգեկցի, «Խրատներ»

Պատրաստեց Առաքել ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԴՐԱՆՏԻ ԸՆՏԱՆԻՔ

ԱՐՄԵՆՆ ՈՒ ՏԱԹԵՎԸ...

«Շողակն Արարատյան» ամսաթերթի սիրելի ընթերցողներ, «Դրախտի ընտանիք» խորագրով մեր շարքի գրուցակիցներն են «Arm\_Electronic» ռոբոտաշինության և ինժեներական հմտությունների կենտրոնի համահիմնադիրներ Արմեն Ավետյանն ու Տաթև Խաչատրյանը:

Ինժեներ ամուսինների ընտանիքը տասը տարեկան է: Արմենը պատմում է, որ ի սկզբանե հասկացել է՝ Տաթևը հարազատ հոգի է, ում ձեռքը բռնած հանգիստ կարելի է անցնել կյանքի ուղիներով: Տաթևին էլ գրավել է նրա ամսահաման ազնվությունն ու համբերատարությունը: Ըստ Արմենի՝ ամուսնության սկզբնական փուլն անցնելուց հետո ավելի խորքային են պատկերացնում «ընտանիք» հասկացությունը: Կոնֆլիկտային իրավիճակները, ծագած խնդիրներն ու համատեղ ուժերով գտած լուծումներն օգնում են հարթել ամուսնական կյանքը: «Ընտանիքը ճանապարհ է, որը պիտի միասին հարթահարվի»: Տաթևի կարծիքով՝ ընտանիքն ամենօրյա աշխատանք է: «Ամուսինները պիտի մշտապես զարգանան, ինքնակատարելագործվեն, լինեն համբերատար: Եթե մտածես՝ ամեն ինչ իդեալական է, ապա անընդհատ կսայթաքես: Պետք է ռեալ հասկանալ՝ ինչ են ակնկալում ընտանիքից: Մարդիկ, երբ սիրահարվում են, ամուսնանում, չեն գիտակցում, որ դրանից հետո էլ աշխատանք ունեն տանելու: Ինչպես գործի մեջ ներդրված ջանքերն ու չհանձնվելն են տալիս իրենց արդյունքը, այդպես էլ ընտանիքում է»:

Արմենի խոսքով՝ իրենց բնորոշ է մեծ սերը միմյանց նկատմամբ, հարգանքը, իրար լսելու կարողությունն ու երջանիկ լինելը: Տաթևն էլ հավելում է. «Մեր ընտանիքի համար բնութագրական է նաև Արմենի համբերատարությունը և մեր երկուսի անալիտիկ մտածելակերպն ու աշխատա-


սիրությունը: Ընդհանրապես եթե ընտանիքի անդամները կարողանան ճիշտ վերլուծել իրավիճակը, խնդիրների դեպքում հարցեր տալ իրենց իրենց, հնարավոր է և չգնան բաժանության»:

Զրուցակիցներս ունեն մեկ զավակ՝ ութամյա Սամվելը: Նա շատ խմբակներ է հաճախում: Արմենը գտնում է, որ մինչև տասը տարեկան դառնալը երեխային պետք է ծանոթացնել տարբեր ուղղությունների հետ՝ ընձեռելով փորձարկելու հնարավորություններ: Դետո արդեն նա կընտրի, թե որ ուղղությունն է ցանկանում զարգացնել:

Ամուսինները խոստովանեցին, որ շատ բաներ են սովորել իրենց որդուց, ում միշտ մեծի պես են վերաբերվել: «Սամվելի ծնունդով մտահորիզոնի բազում փոփոխություններ եղան: Մեր աչքերը կարծես նորովի բացվեցին, երբ տեսանք մեկին, ում բերել են այս աշխարհի ու պիտի հասցնեն իր նպատակների իրականացմանը: Ես սկսեցի նկատել՝ ինչն է օգտակար, ինչը՝ վնասակար, ինչու ինչ-որ մի բան արժե անել, մեկ այլ բան՝ ոչ: Ես չեմ մտածում այն մասին, թե ինչ ընտրություն կանի նա այս կյանքում, կարևորը, որ լավ մարդ դառնա, ասում է Արմենը, իսկ Տաթևն էլ ավելացնում է. «Մենք ամուսիններով հասկացանք՝ ոչ թե պետք է երեխային դաստիարակել, այլ պիտի օրինակ ծառայել: Ստացվում է՝ ոչ միայն դու ես երեխային դաստիարակում, այլև դու էլ ես դաստիարակվում»:

Արմենն ընտանիքների ամրությունը պայմանավորում է երեք բաղադրիչով՝ սեր, հարգանք ու ազնվություն, որոնց առկայությամբ կարելի է հաղթահարել շատ խնդիրներ: «Ամհաջողության պատճառները շատ են՝ սկսած ամենատարբեր հարթակներում բարձրաձայնվող ազատ ապրելու հետ կապված քարոզներից: Ընդհանրապես համաշխարհային մակարդակով մեծ աշխատանք է տարվում

ընտանիքները քանդելու ուղղությամբ, որովհետև այդ դեպքում մարդը դառնում է ենթակա: Հակառակ պարագայում նա ուժ է, որ բազում խնդիրներ կարող է լուծել: Ու քանի որ ընտանիքն է ամենակարևոր օղակը ցանկացած պետության, ապա



նրա թույլ լինելու դեպքում պետությունը հեշտորեն կարելի է հավասարեցնել գրոյի: Այս ուղղությամբ մեզ վրա աշխատել են տասնամյակներ շարունակ՝ անելով ամեն բան ընտանիքի հիմքերը խարխուլու համար»:

Տաթևն էլ նույն ցավով մատնացույց է անում նմանատիպ մի քանի իրավիճակներ մեր իրականությունից. «Աստիճա-

նաբար վերանում է միասին հաց ուտելու սովորությունը: Օրինակ՝ ես փորձում եմ դա պահպանել, քանի որ միասին հաց ուտելու մշակույթն ամրացնում է ընտանիքը: Ինձ ջերմացնում է նաև տատիկ-պապիկների ներկայությունն ընտանիքում, նրանց անսահման սերն ու ամենօրյա հոգածությունը թռեցիկների հանդեպ: Դժբախտաբար հիմա կան շատ մեծահասակներ, որոնք նույնպես առաջնորդվում են միայն սեփական եսի համար ապրելու գաղափարով: Ամեն բան կարծես արժեզրկված լինի»:


Այս բոլոր մտայնություններն ու 44-օրյա պատերազմից հետո առաջացած խնդիրները հիմք դարձան «Arm\_Electronic»-ի ստեղծման համար: «Բոլորիս մոտ տեղի ունեցան աշխարհայացքային փոփոխություններ, սրվեցին այն հարցերը, թե ինչու ենք ապրում, ինչ իմաստ ենք փնտրում այս կյանքում: Պատերազմից հետո նաև կորավ վատահոլությունն ու կայունությունը: Ամհրաժեշտ էր գտնել խորքային լուծումներ: Եվ ծնվեց ինժեներական կենտրոն ունենալու գաղափարը, որովհետև ինժեներությունը, ինժեներական մտածելակերպը կարևոր են մեր երկրի համար: Ու քանի որ մեր որդին չորս տարեկանում արդեն որոշակի ինժեներական գործողություններ անում էր, մենք համոզված էինք՝ այլ երեխաների էլ կկարողանանք սովորեցնել: Ուստի սկսեցինք մեր սաների մեջ սեր արթնացնել դեպի ինժեներությունը, տեխնոլոգիան, գիտությունը: Այդ երեքի միավորումը կարող է հրաշալի արդյունք տալ: Նաև նպատակ էինք դրել ստեղծել ռոբոտաշինության այնպիսի կենտրոն, որտեղ կփոխանցենք իրական գիտելիքներ՝ օգնելով սովորածը կիրառել կյանքում, և որտեղ կկարողանանք զարգացնել հայկական ներուժը:

→ էջ 8

ՍՈՒՐԲ ՀՈՎՋԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՄԻՐՈՒ ՄԱՍԻՆ

ոգացե՛ք, սիրելիներս, իմանալու համար, թե ինչ է Աստծո սերը: Մեծագույն գործ է, և չկա այլ բան, որ մեզ համար այդքան օգտակար լինի: Ամեն ինչի պատճառը սերն է, և առավել սերն այն է, երբ մարդիկ բարերարության են արժանանում, այնպիսի բարերարության, որ երբեք չեն ունեցել: Մենք էլ նմանվենք Նրան: Թշնամիների հանդեպ բարիք գործենք, սիրենք մեզ ատողներին, դա է մեզ նմանեցնում Աստծուն: Եթե բարեկամներին եք սիրում, ասում է, ի՞նչ եք շահում, հեթանոսներն էլ են այդպես վարվում: Այլ սիրո նշանն այն է, երբ քեզ ատողներին ես սիրում:

նրանց կողմից: Ասում էին՝ ո՞վ է քեզ իշխան և դատավոր կարգել մեզ վրա: Բայց քանի որ ազգականներն էին, ներողամտությամբ էր վերաբերվում նրանց: Եվ հե-



տո, երբ հրաման ստացավ գնալ արհամարհողների և ապերախտների հետ, չհասպաղեց: Այդքան նշաններից և հրաշքներից հետո շատ անգամներ մտածում էին

քարկոծել նրան: Մովսեսն այսքանից հետո Աստծուն ասաց. «Եթե ներելու ես իրենց մեղքերը, ներիր, իսկ եթե չես ներելու, ուրեմն իմ անունը ջնջիր քո մատյաններից, իմ վրա» (Մատթեոս 5:45): Նա իր Գործ է օրինակ բերում, իսկ մենք՝ Քրիստոսին: Նրանց համար եկավ, ծառա եղավ, խոնարհեցրեց իր անձը, ունայնացրեց, ծառայի կերպարանք առավ: Եվ երբ եկավ՝ շրջում ու բժշկում էր բոլորի ցավերն ու հիվանդությունները: Բոլորը զարմանում և հիանում էին ու ասում, թե որտեղի՞ց սրան այս ամենը: Եվ ովքեր շնորհն ընդունում էին, հայոյում էին և ասում, թե մոլորեցնող է: Մի՞թե երբևէ մերժեց նրանց, ո՛չ, երբեք: Այլ թեև այս ամենը լսում էր, առավել ևս բազմացնում էր շնորհները և ինքն էր գնում նրանց մոտ, որ խաչ բարձրացնեն, որպեսզի ինչ ձևով էլ լինի, միայն փրկի նրանց: Եվ խաչափայտի վրա աղոթում էր Գործ՝ ասելով. «Դա՛յր, սա մեղք մի՛ համարիր սրանց»:

Պողոսն էլ քարկոծվեց նրանց կողմից, բազմաթիվ չարչարանների ենթարկվեց, սակայն նրանց համար փրկության բազում միջոցներ էր մտածում: Լսիր, թե ինչ էր ասում. «Իմ սրտի փափա-

զը և աղոթքը առ Աստված նրանց փրկության համար են» (Հռոմեացիս 10:1), և նորից. «Վկայում են նրանց համար, թե նախանձախնդրություն ունեն Աստծո հանդեպ» (Հռոմեացիս 10:2), և նորից, թե. «Դու, որ ի բնե վայրի ծիծեռնուց կտրվեցիր, և քո բնությանը հակառակ, բարի ծիծեռնու վրա պատվաստվեցիր, որչափ ևս առավել նրանց, որ բուն իսկ ճյուղերն են, կպատվաստվեն իրենց ծիծեռնու վրա» (Հռոմեացիս 11:24): Արդ, որքան գու՛թ կա այս ամենի մեջ, որքան խնամակալություն:

Այս ամենն իմանալով՝ միմյանց հանդեպ սեր հաստատենք, որպեսզի ճշմարտությամբ տնկենք այն մեր մեջ և հասնենք խոստացված բարիքներին Քրիստոս Գիտուսի՝ մեր Տիրոջ միջոցով, որի հետ նաև Գործը և Սուրբ Գազուն փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Փոխադրումը գրաբարից՝ Գայանե ԹԵՐԶԱՆԻ

# ԱՌԱՆՑ ՊԱՅՔԱՐԻ ՉԵՍ ՏԵՄՆԻ ԼՈՒՅԱԸ

ստվածաշունչը պատգամում է. «Առեք հավատի վահանը, որով պիտի կարողանաք հանգցնել չարի բոլոր մխացող նետերը: Վերցրեք նաև փրկության սաղավարտը և Սուրբ Հոգու տուները, այսինքն Աստծու խոսքը: Անդադար աղոթեք ամեն տեսակ աղոթքներով ու խնդրանքներով Հոգու օգնությամբ, և սրա համար արթուն մնացեք կատարյալ հարատևությամբ և խնդրանքներով, բոլոր սրբերի համար» (Եփեսացիս 6:16-18):

Ինչպիսի՞ն է կյանքն առանց պայքարի, ինչպե՞ս և ինչո՞ւ պայքարել. «Շողակն Արարատյան» ամսաթերթի գրուցակիցը 33 վաստակավոր արտիստ, դերասան, բեմադրիչ Դավիթ Հակոբյանն է:

### Պայքարը և լույսը

Բնության միջից հանք պայքարը, և բնությունը կոչնչանա: Պայքարն է ծնունդ և մաքրագործում: Եթե պայքարը հանենք, հողի տակից ծիր դուրս չի գա: Այդ բարակ ծիր որքան ուժեղ է, ինչպես է պայքար մղում, որ դուրս գա դեպի լույսը: Պայքարն ու լույսը իրար ձգող հասկացություններ են: Առանց պայքարի չես տեսնի լույսը. այն դեպի տիեզերք է տանում, դեպի Աստված: Երբ մարդուն ցանկանում են բանտարկել, տանում են այնպիսի տեղ, որտեղ լույսը քիչ լինի: Փակված մարդը լույս է փնտրում: Պայքարն իր հետ բերում է տառապանք, և ոչ մի գեղեցիկ բան չի ծնվում առանց տանք

ջանքի, ցավի, տառապանքի:


### Պայքար՝ հաճույքի համար

Բնության մեջ պայքարը կողմավորված է: Ծիրը հենց այնպես պատերազմ չի մղում իրեն փակող քարի դեմ: Ծիրը հենց տեսնում է լույսը, դառնում է ինքնաբավարարված: «Մաուզլի. Ջունգլիի գիրքը» վեպում համաճարեղ խոսք կա: Քիփլինգը այն ոչ թե գայլերի, այլ մարդկանց համար է գրել: Ասում է՝ որս արա ձագերիդ, կնոջդ, քեզ կերակրելու համար, հաճույքի համար երբեք որս մի՛ արա: Մի՛ սպանիր ու թափիր: Անիմաստ է հաճույքի համար որս անելը, իսկ մարդն ամբողջ կյանքը զբաղված է հաճույքի համար որս անելով: Մարդը անբավ է: Ինքնաբավ չլինելը միշտ ծնելու է պատերազմներ: Ի՞նչ պետք է անել, որ մարդը բավարարված լինի, դրա համար պետք է փնտրել լույսը, ինչպես՝ ծիրը:

### Տեսակի կռիվ

Բնության մեջ բոլորը պայքարի մեջ են՝ մրջյունը, արջը... Ծառը պայքարի մեջ է կողքի ծառի հետ: Խնձորենիին տնկիր ընկուզենու կողքին, կռիվ է: Արմատները կռվում են, տարածք են ազատում. տեսակի պայքար է: Նույն տեսակի ծառերն իրար հետ լավ են զգում, որովհետև մույն ձևով են սնվում, մայում լույսին: Գլոբալիզացիոն շարժումը տեսակի վերացման ծրագիր ունի: Պատկերացնում եք, թե ինչ տգեղ կլինի երկրագունդը, եթե բոլոր ծաղիկները

ըր դառնան խլորձ: Պետք չէ անիմաստ պայքարել՝ խլորձ դառնալու համար, որովհետև ամեն տեսակ իր տարածքի մեջ է գեղեցիկ: Մեզ ստիպում են այլ տեսակ լի-



Դավիթ Հակոբյան

նել: Պայքարի իմաստը տեսակը պահպանելու մեջ է: Զի կարելի պարտադրել մեկ այլ տարածքի ժողովրդին անել այն, ինչը դեմ է նրա հոգեբանությանը, ավանդույթներին:

### Խնդրել ու փնտրել

-44-օրյա պատերազմի ժամանակ սարկավազներից մեկը ավտոմատը ձեռքին գնում էր սահման, լրագրողը հարցնում է՝ գնում է մարդ սպանելու: Սարկավազը պատասխանում է՝ գնում է հայրենիքը պաշտպանելու: Ասում են, թե հայերը ընդունեցին քրիստոնեությունն ու խեղճացան: Հարց է առաջանում՝ քրիստոնեությունը ինչո՞ւ անգլիացուն, գերմանացուն չխեղճացրեց: Ո՛չ, քրիստոնեությունը խեղճություն չի քարոզել: Մեզ պարզապես ձեռնտու է հանգիստ ապրելը: Ասված է. «Խնդրեք և ձեզ կտրվի»: Մենք սխալ ենք հասկացել այդ խոսքը: Իրականում այդ «խնդրեք»-ը «փնտրեք»-ն է: Գնում ենք եկեղեցի ու սկսում խնդրել՝ չհասկանալով, որ մենք պիտի փնտրենք: Առանց պայքարի ոչինչ չի կարող լինել: Մտածե՛լ եք, թե ինչո՞ւ էր Հիսուս խոսում առակներով, ինչո՞ւ պարզ չէր ասում, որովհետև մարդուն պետք է ստիպես, որ մտածի, գտնի ճանապարհը, հարցը լուծելու ձևը: Խելացի մարդիկ միշտ մտածում են, երբեմն կասկածում՝ արդյո՞ք ճիշտ են վարվում, միգուցե սխալ են ու պետք է ուղղվեն: Այժմ էլ այն, ինչ ասում են, մի քիչ կասկածում են՝ արդյո՞ք ճիշտ են, թե՞ սխալ, նշանակում է՝ բուն, ճիշտ լույսը դեռ չեն տեսել: Երանի նրանց, ովքեր կտեսնեն:

Պատրաստեց Անի ԱՎԱԳՅԱՆԸ

# ԱՐՑԱԽԻ ԷՋԸ ԹԵՐԹՎԱԾ ՉԷ. ԼԻՆԵՆՔ ՈՒ ՄՆԱՆՔ ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՏԵՐԸ

2020 թվականի Արցախյան պատերազմի օրերին մի խումբ նվիրյալներ ստեղծել էին «Հայքի մշակույթի օմբուդսմենի գրասենյակը», որ միջազգային հնչողությունը հարողդեին թշնամու կողմից Արցախի մշակութային ժառանգության հանդեպ կատարվող մշակութային ցեղասպանությունը: Այսօր արդեն կառույցը վերանվանվել է «Հայկական լեռնաշխարհի օմբուդսմենի գրասենյակ», որպեսզի աշխատանքները ստանան ավելի լայնածավալ բնույթ և չչրջանցեն նաև Արևմտյան Հայաստանը և մեր բոլոր պատմական տարածքները...

Մեր գրուցակիցն է «Հայկական լեռնաշխարհի օմբուդսմենի գրասենյակ»-ի ղեկավար, Արցախի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի Կովկասագիտության կենտրոնի տնօրեն Հովիկ Ավանեսովը:

Մշակույթի ժառանգության պաշտպանի ինստիտուտի անհրաժեշտության մասին մի խումբ մտավորականներով մշտապես քննարկում էինք այս գերխնդիրը և հնարավոր սպասվող մարտահրավերները: Եվ մշտապես արձանագրում, որ քննարկումներից բացի պետք է կյանքի կոչենք այս նախաձեռնությունը: Աստիճանաբար մեր մտորումները ավելի հայեցակարգային բնույթ էին ստանում: 2020 թ. տարբեր բնակավայրերում փաստափառք աշխատանքների ընթացքում, երբ արձանագրում էինք

հերթական հուշարձանի թիրախավորումը, առավել ակնհայտ էր դառնում, որ մշակույթի ժառանգության օմբուդսմենի գրասենյակի ստեղծումը ոչ միայն դառնում է անհրաժեշտություն, այլև հրատապ կարգավորում պահանջող: Տեսական ժամա-

յան փաստերը արձանագրելուն զուգահեռ աշխատում էինք կառույցի կատարելագործման շուրջ և այդ աշխատանքները շարունակվում են մինչ օրս: Այդ աշխատանքների արդյունքում կառույցը վերանվանվեց «Հայկական լեռնաշխարհի մշակու-

թային ժառանգություն»: Ի՞նչ շրջանակների հետ եք համագործակցում, որպեսզի մշակութային ցեղասպանությունը ստանա միջազգային հնչողություն:

Ադրբեջանի պետական վարչակարգը ոչ միայն յուրացնում և ոչնչացնում է Արցախի մշակութային ժառանգությունը, այլ իսլամացնելով Արցախի հայկական ինքնուրույն փորձում է ստեղծել բնակավայրի «ադրբեջանական ինքնությունը»: Այս քաղաքականությունն իրականացնելու համար հիմնահատակ ոչնչացնում են ոչ պատմաճարտարապետական հուշարձաններ, այլ նաև ամբողջական գյուղեր: Նշվածի վառ ասպարեզ է համարվում Շուշիի Սուրբ Հովհաննես Սկրտիչ եկեղեցու (որ հայտնի է նաև «Կանաչ ժամ» անունով) հիմնահատակ ավերումը, Շուշիի շրջանի հերոսական Քարինտակ գյուղի ոչնչացումը: Ադրբեջանի կողմից պարբերաբար իրականացվող մշակութային ցեղասպանությանը առնչվող փաստերի ուսումնասիրման համար համագործակցում ենք ինչպես Հայաստանի մասնագիտացված թիմերի ու անհատ փորձագետների հետ, այնպես էլ ոլորտով զբաղվող արտասահմանյան գիտնականների և փորձագետների հետ: Բռնազավթված Արցախում կատարվող մշակութային ցեղասպանության մասին փաստերը ներկայացնում ենք նաև տարբեր արտասահ-

մանյան պատվիրակությունների հետ հանդիպման ժամանակ: Համապատասխան փաստեր տրամադրում ենք նաև մեր այն գործընկերներին, որոնք պարբերաբար տարբեր հանդիպումների և քննարկումների են մասնակցում, որպեսզի ներկայացվի Արցախում տեղի ունեցող քաղաքակրթական արժեքների ոչնչացումը: Բոլոր հանդիպումներում մշտապես շեշտադրում ենք, որ Արցախում ոչնչացվում է համաշխարհային քաղաքակրթություն, և դրանով մոլորակը կորցնում է իր քաղաքակրթական արժեքները:

-Ըստ «Ձինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թ. Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ արգելված է մշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի, գողության, կողոպուտի, յուրացման, թշնամանքի և հաշվեհարդարի ցանկացած գործողություն: Հաագայի 1954 թ. առաջին արձանագրությունն արգելում է օկուպացված տարածքներում ոչնչացնել մշակութային կամ հոգևոր արժեքները: Ի՞նչ քայլ պիտի կարողանանք իրականացնել մենք՝ մեր համահայկական ներուժով, որպեսզի թշնամին որպես ահաբեկիչ երկիր ենթարկվի միջազգային պատասխանատվության և լինի հատուցում:

→ էջ 8



«Կանաչ ժամ» Շուշի

նակ կատարած աշխատանքների արդյունքում 2023 թ. հունիսի 6-ին առցանց ասուլիսով շրջափակման պայմաններում գտնվող Արցախում ազդարարվեց Հայքի մշակույթի օմբուդսմենի ինստիտուտի աշխատանքների մեկնարկը: Արցախի բռնազավթված հատվածներում Ադրբեջանի կողմից պետական մակարդակով իրականացվող մշակութային ցեղասպանու-

թային ժառանգության օմբուդսմենի գրասենյակ» և ամենից առաջ հանդիսանում է Հայքի մշակույթի օմբուդսմենի գրասենյակի իրավահաջորդը:

Ադրբեջանի իշխանությունների թիրախում այս անգամ հայտնվեց «Մենք ենք մեր սարերը» հուշարձանը, որը ադրբեջանական կայքերում ներկայացվում է որպես «ադրբեջանական մշակու-

ՀՈՒՇ-ԴԻՍԱՆԿԱՐ

ՆՐԱ ԽՈՍՔԸ ԱՆԱՂԱՐՏ ԷՐ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՍ...

այ բանաստեղծի համար հայրենի հողն ու բնությունը, այրուբենն ու մայրենի լեզուն, Հայ Առաքելական Եկեղեցին բացառիկ խորհուրդ են ունեցել: Հազարամյակների ընթացքում այդ սրբություններով է հայ բանաստեղծը բարության ու լավատեսության սերմեր սփռել մեր ժողովրդի հոգում՝ մեզանում ամուր պահելով իմաստությունը և արարելու ոգին:

Այդպիսի բանաստեղծ էր Լյուդվիգ Դուրյանը՝ սիրահարված հայրենի եզրերին, հպարտ ու արևախամ լեռներից, հորդափոս ջրերին, ծառին ու ծաղիկին, քարին ու քիփին...

Գարնան ամպ են, գալիս են ես, Մռայլ ահ են բերում: Դուք այդ ահից մի վախեցեք - Չմռան մահ են բերում: Գարնան ամպ են, գալիս են ես, Ու որոտ են բերում: Դուք որոտից մի վախեցեք - Ծաղկահոտ են բերում: Գարնան ամպ են, գալիս են ես, Ու կայծակ են բերում: Դուք կայծակից մի վախեցեք - Ծիածան են բերում: Գալիս են ես ու հեղեղի խռով ձայն են բերում: Դուք հեղեղից մի վախեցեք - Սերմնացան են բերում:

Ես հաճախ եմ հյուրընկալվել բանաստեղծի տանը, գրուցել ենք հայոց հոգսերի ու ազգապահպանության խնդիրների շուրջ: Ամեն հանդիպում Լյուդվիգ Դուրյանի հետ ասես պոեզիայի տոն լինել: Նրա ապրած կյանքի ամեն ռոպեն բանաստեղծական հույզերի ու պոռթկումների խտացում էր: Ամեն ինչի մեջ՝ լինել էր դա սովորական ծաղիկ կամ տերև, դալուկ ծառի ճյուղ կամ թռչնի դայլայլ, նա կյանք ու ոգի էր տեսնում, որոնք վերծանելով՝ դարձնում էր հանգուլ ու վանկուլ շաղախված բանաստեղծական տող...

Նա ինձ հաճախ էր պատմում Կոտայքի մարզի Շահաբ գյուղում գտնվող իր առանձնատան, պտղատու այգու ու այնտեղ ճախրող թռչունների մասին, որոնց բաղձրահունչ երգը շոյում էր բանաստեղծի ականջը:

—Երբևէ փորձե՞լ ես վերծանել թռչունների դայլայլը,— մի օր հարցրեց պոետը:

—Իհարկե,— պատասխանում եմ: —Այդ փոքրիկ արարածներին Աստված բանաստեղծելու և երգելու մեծ շնորհք է պարգևել:

Բանաստեղծը ժպտաց ու ասաց.

—Շատ դիպուկ էր խոսքը: Այո, թռչուններն աշխարհի ամենակատարյալ պոետներն ու երգիչներն են: Շահաբի իմ առանձնատանը ես ամեն օր ականջալուր եմ լինում նրանց երգին: Երբ ուշադրությամբ լսում ու վերծանում ես



այդ փոքրիկ արարածների երգը, հասկանում ես, որ այն ամբողջությամբ շաղախված է հանգուլ ու վանկուլ:

Հիանում էր բնության հրաշքներով: Փոքրիկ թռչուններից անգամ նա սովորում էր տաղաչափական վարպետության գաղտնիքները: Նրա հիացմունքն անսահման էր...

2009 թվականն էր: Ձանգահարեցի Դուրյանին: Տուն հրավիրեց: Ասացի տպագրության եմ պատրաստում բանաստեղծություններիս «խաչքար» ժողովածուն: Գիտեր, որ գիրքս խմբագրված և էջադրված էր: Ասաց՝ սիրով կծանոթանա անտիպ գործերիս:

Լյուդվիգը անկեղծ ու մաքուր հոգի ուներ, ուրախանում էր իր շնորհաշատ գրչակիցների ստեղծագործություններով: Էջադրած գիրքը տվեցի բանաստեղծին: Նա թերթելով կարդաց դրանցից մի քանիսն ու ասաց.

—Հրաշք... հրաշալի գործեր են...

Երբ նրան ինչ-որ բան շատ էր դուր գալիս, հիացմունքն արտահայտում էր՝ հրաշք անվանելով ստեղծագործությունը: Նա երբեք ոչ ոքի չէր հաճոյանում, իր գնահատականներում անաչառ էր, շիտակ ու սկզբունքային: Լավ գիտեր բանաստեղծական խոսքի արժեքը և հենց այնպես չէր շռայլում իր հիացմունքը:

—Եթե հնարավոր է՝ էջադրված օրինակը թող մնա ինձ մոտ,— առաջարկեց Դուրյանը,— ուզում եմ ամբողջությամբ կարդալ գիրքը:

—Թող մնա,— չառարկեցի:

—Մի քանի օրից կվերադարձնեմ բնօրինակը,— ասաց պոետը:

Անցան օրեր: Ձանգահարեցի Դուրյանին: Դարձյալ տուն հրավիրեց:

—Ծայրից ծայր կարդացել եմ անտիպ գործերդ,— ասաց նա: —Հրաշալի գիրք է՝ ամբողջովին շաղախված հայրենասիրությամբ, կրոնայալ երկրի ցավով, բայցև՝ անափ լավատեսությամբ: Քեզ համար, սակայն, անակնկալ ունեմ: Գրքիդ համար խոսք եմ գրել, կարող ես օգտագործել որպես առաջաբան:

Նա ինձ մեկնեց ձեռագրով երկու էջանոց խոսքը: Կարդացի: Դա, իրոք, բանաստեղծական խոսք-էսսե է՝ գրված անսահման սիրով ու ջերմությամբ, իր գրչընկերոջն ուղղված սրտի խոսք. «Խոսել Բաբկեն Սիմոնյանի մասին, նշանակում է խոսել առաջին հերթին կարոտի մարմանդ կրակի ցավով ապրող անսահման նվիրյալ, հայրենասեր բանաստեղծի մասին: Գիտեի նրան այնպես՝ հեռվից: Մեր բարեկամությունն սկսվեց Ծաղկածորի ստեղծագործական տանը... Ջգացի, որ նա Բրյուսովյան, Բլուկյան, Տերյանական դպրոցի մտավորական-ինտելիգենտ է թե՛ իր խոսքի վարպետությամբ, թե՛ իմացական տարածքով դասական ոճերին հակված քնարերգու: Երջանիկ եմ, որ Բաբկեն Սիմոնյանն իմ գրական կրտսեր բարեկամն է՝ ամբողջապես հայրենագործ՝ գրականության համար ծնված, բանաստեղծելու համար շնչող և ապրող իր էությանը»:

2010-ին Լյուդվիգ Դուրյանը, ավաղ, հրաժեշտ տվեց երկրային կյանքին: Նրանից, որպես մասունք, ինձ մնացին իր մաքուր ու անկեղծ խոսքը և հրաշալի գրույցներն ու պատմությունները: Նա գնաց միանալու հայ դասական պոետների համաստեղծությանը՝ Արարատի նման ջինջ ու անաղարտ բանաստեղծական խոսք թողնելով իր պոեզիայի համակիրներին:

Բաբկեն ՍԻՄՈՆՅԱՆ

ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ՀՆԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 4-ում

Հազարավ Սեւրոպ Մաշտոցի հեղինակած «Ապաշխարության երգեր»-ը, որի մեջ հավատացյալ, մեղքերի ծանրության տակ կքված մարդու հեծեծանքներն ու ողբերն են հնչում: Ապաշխարող մարդու հառաչանքները, հավերժության, մաքրության, բարոյական կատարելության ձգտող մարդու դողդոջուն ճիչը: Բարու անունով պայքարող մարդու դժվարին տառապանքն է մարմնավորված մաշտոցյան երգերում: «Ապաշխարության երգեր»-ը քնարաշունչ մի ստեղծագործություն է, որտեղ հերոսի անսահման անկեղծությունը և ներքին բարոյ, անվերջանալի տառապանքը քաղցր մի թախիծով է համակում ընթերցողի հոգին: Այդ գողտրիկ ստեղծագործությունից մեր առջև է հանում 15 դար առաջ ապրած հավատացյալ մարդուն հատուկ մեղսականությամբ ու թուլություններով: Մարդ, որ ձգտում է Անհասանելիին: Մարդ, որ փորձում է սպանել ամեն գայթակղություն հոգին գորացնելու, երկնային երանավետ կյանք ապահովելու համար: Մարդ, որ գիտի մարմնի և հոգու ծայրահեղորեն տարբեր պահանջները: Նարեկացին, որ հաճախ երգում էր մաշտոցյան այս շարականները, որպիսի հոգեկան բավականություն պիտի ստանար: Որքան հարազատ պետք է հնչեին այս երգերը մի մարդու համար, ինչպիսին էր Նարեկացին, որ իր հոգին բացած Ամենակարողի առջև զղջում էր դառնորեն ու փրկություն հայցում:


...Մեղայ Տէր խոստովանիմ ըզյանցանս իմ. Մեղայ ողորմեա: Մեղայ քեզ Տէր քաւեա զիս: Մեղաք անօրինեցաք ամենեքեան: Ոչ պահեցաք ըզպատուիրանս քո. Մեղայ ողորմեա: Դարձիր Տէր ի բարկութենէ քումմէ. Անցո իմ մեջ ըզցատումն քո. Մեղայ ողորմեա:

Ահա նույն հավերժական վիշտը, որ դարեր շարունակ նույն աստվածությամբ կրծում է և՛ Մաշտոցին և՛ Նարեկացուն: Մաքրվելու, աստվածանալու նույն հարատև ձգտումը: Ջարմանալիորեն Մաշտոցի այս երգերը, որքան որ ապաշխարության սաղմոսների հետևողությամբ և նրանց բառ ու բանով են գրված, նույնքան էլ ինքնուրույն են ու անհատական: Հիմա էլ լսենք Նարեկացուն.

Մեղայ մեծիդ բարերարութեան անարգս մեղայ, Մեղայ ծագմանդ ճառագայթից՝ խաւարս մեղայ, Մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց՝ արդարև մեղայ, ...Մեղայ սիրոյդ վերնում գթութեան՝ յայտնապէս մեղայ, Մեղայ պաշտելի արեան արարչիդ՝ իսկապէս մեղայ:

Ընդհանրությունները ակնբախ են: Նույն մտահայեցողական մարդն է մեղ-

քի գիտակցության ու կատարելության ձգտման ճանապարհին ճենճերում: ...Կոմիտասը գրել է «Հարց» կոչվող շարականների շարքը, որը նախորդ շարա-



կանագիրների գործերից չի տարբերվում: «Հարց»-ում տիրող դավանաբանական ռետորիկան է, միտքը: Կոմիտասի այս ստեղծագործության մեջ կան տողեր, բառեր որոնք հիշեցնում են Նարեկացու այս կամ այն կտորը.

Քակտեցին մեքենայքն, Բարձին որոգայթքն, Պարտեսցին գէնքն սայրասուրք, Մերժեսցի մէգն, Փարատեսցի խաւարն, Մեկնեսցի մառախուղն...

Կոմիտասի «Ամծինք նուիրեալք»-ը անհամեմատ բարձր արժանիքներով օժտված ստեղծագործություն է: Այստեղ առկա է բանաստեղծական ներշնչում, ցայտուն անհատականություն, ճոխ բառապաշար, հանգերի ու վանկերի օգտագործում: Ինչպես Կոմիտասն է կրակված երգում իր պաշտելի անհատականներին, նույնպես էլ Գրիգոր Նարեկացին, շարունակելով նույն ավանդույթը, երգում է Աստվածամորը, առաքյալներին՝ ավելի շքեղ ու ճոխ պատկերներով, ավելի կոնկրետ գույներով: Աստծո սեղանին կյանքը իբրև ողջակեզ դրած Նարեկացին չէր կարող չհափշտակվել Դեղինի մեջ ու նրա ընկերների անձնագրողությամբ, մի պատարագ, որ շատ նման էր ամեն օր պատարագվող իր կյանքին:

Մաշտոցը, Կոմիտասը և մնացած շարականագիրները նախապատրաստեցին Նարեկացու նման համարի մուտքը դեպի հայրենի գրականության անդաստան:

Մասուն Կարդանյան, «Նարեկացին և հնագույն հոգևոր երգերը», անտիպ էջեր Պարաստեց Սիլվա ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ

# ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ԱՎԵԼԻՆ



րդի հայ կերպարվեստի նշանավոր դեմքերից է գեղագետ, արվեստաբան-գծանկարիչ, ԵՊՀ դոցենտ Լևոն Լաճիկյանը: Ծնվել է Գյումրիում՝ նկարիչների ընտանիքում: Նկարել է հայրը, նկարում է ավագ եղբայրը՝ ՀՀ վաստակավոր նկարիչ Սամվել Լաճիկյանը: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, ապա և՛ ասպիրանտուրան «Գեղագիտություն» մասնագիտությամբ: Նրա գիտական ու արվեստաբանական հոդվածները տպագրվել են հայագիտական նշանավոր հանդեսներում ու հանրագիտարաններում, լույս տեսել առանձին գրքերով՝ Երևանում ու Նյու Յորքում: Արդեն մի քանի տասնամյակ նա իր գրիչն ու ջանքերը ծառայեցնում է նաև ժամանակակից հայ մշակութային կյանքի լուսաբանման հույժ կարևոր գործին, ավելին՝ նաև մասնակցում գրական-մշակութային այդ ընթացքին՝ Հայաստանի ու Սփյուռքի մանուկում տպագրած իր բազմաթիվ հրապարակումներով, վերջին տարիներին՝ նաև գծանկարներով: Արվեստաբանությունից սահուն անցում կատարելով դեպի նկարչություն՝ Լևոն Լաճիկյանը արդեն ստեղծել է քաղաքային տեսարանների տպավորիչ նկարաշարեր՝ արժանիորեն ձեռք բերելով «քաղաքերգակ» նկարչի համբավ:

Մշակութային գործչի՝ 2004-ին հրատարակած «Անլույս օրերի ոգեղեն ղողանջներ» ժողովածուն իրավամբ համարվում է անցյալ դարավերջի հայ մշակութային կյանքի հանրագիտարան: 2006-ին Երևանում հայերեն ու անգլերեն հրատարակված «Խաչվող ճանապարհներ» գիրքը մեծ հաջողություն բերեց հեղինակին. ընթերցողին այն գրավում է ոչ միայն գեղեցիկ հայերենով շարադրված բովանդակակից ուղեգրություններով, այլև ուշագրավ գծանկարներով: Լևոն Լաճիկյանը 8 վավերագրական ֆիլմերի սցենարի հեղինակ է, Հայաստանի լրագրողների և նկարիչների միությունների անդամ: Մինչ օրս կազմակերպել է 17 անհատական ցուցահանդես՝ Հայաստանում և արտերկրում: Մեծ տարածում գտան նրա «Գյումրի, իմ սեր» և «Հայկական եկեղեցիներ» բացիկաշարերը: Վերջինս ԱՊՀ երկրների «Գրքարվեստ» 18-րդ միջազգային մրցույթում արժանացավ մրցանակի: Ժամանակակից հայ արվեստին բերած զգալի նպաստի համար արվեստաստեղծ այրն արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի, նաև պարգևատրվել ԵՊՀ և Գյումրու համայնքապետարանի ոսկե մեդալներով:

Օրերս Թեքեյան կենտրոնում բաց-

վեց Լևոն Լաճիկյանի «Գյումրի և ավելին» խորագրով ցուցահանդեսը՝ թվով 18-րդը արվեստագետի ստեղծագործական կենսագրության մեջ. ներկայացված էին շուրջ 7 տասնյակ գծանկարներ: Ցուցահանդեսի առանցքը կազմում է Լաճիկյանի գյումրիապատումը. լինելով այս քաղաքի ծնունդնա կարծես իր հոգու պարտքն է տվել ծննդավայրին՝ այն պատկերելով իր ստեղծագործություններում: Լաճիկյանական արվեստի հետևորդները միակարծիք են, որ այսօրվա գյումրիապետության մեջ զգալի է նկարչի վաստակը: Դիտելով նրա գծած քաղաքային տեսարանները՝ առաջին հերթին զգում են այն սերը, որ նա տածում է հայրենի քաղաքի նկատմամբ: Մյուս կողմից էլ՝ նուրբ գծերով



և զուսպ գուներազներով նա այդ սերը փոխանցում է դիտողին:

Ցուցահանդեսի բացման օրը շատերը խոստովանեցին, որ իրենք վճռել են այցելել Գյումրի՝ հենց Լևոն Լաճիկյանի գծանկարները տեսնելով: Ուշագրավն այն է, որ հեղինակը իր հարազատ քաղաքը պատկերել է բոլորովին նոր ու անսովոր դիտակետից՝ տալով ծանոթ վայրերի «անծանոթ» մեկնաբանություններ: Ավելին՝ դատելով «Վառեն-մարեն»-ի պատշգամբի նկարից՝ նա կատարելապես «նորոգել է» այդ պատշգամբը: Մեր գրույցի ընթացքում նկարիչը խոստովանեց, որ ինքը մտովի կատարյալ է տեսնում Գյումրին և ուզում է բոլորին ի ցույց դնել Գյումրու ազնվական դիմագիծը:

Ցուցահանդեսում գյումրիապատումի կողքին ներկայացված են նաև քաղաքային տեսարաններ Փարիզից, Մարսելից, Վենետիկից, Պրահայից և այլ գեղեցկագույն քաղաքներից, որտեղ գործի բերումով եղել է արվեստաբան-գծանկարիչը: Նա կարծես դարձյալ շեշտադրում է Գյումրու զմայելի գեղեցկությունը, որով այն չի զիջում վերոնշյալ քաղաքներին:

«Գյումրի և ավելին» ցուցահանդեսի մաս է կազմում նաև Լաճիկյանի գրաֆիկական եկեղեցապատումը. արվեստասերին ներկայացված են եկեղեցիներ ու վանքեր Հայաստանից, Արցախ աշխարհից և արտերկրից: Այո, այստեղ կարելի է տեսնել թե՛ Սինգապուրի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին և թե՛ Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցին: Հուզիչ էր, իհարկե, այս վերջին գծանկարը, որտեղ 7-րդ դարի հայկական պաշտամունքային կառույցը գծանկարված է մեկուսի ու մռայլ գույներանգներով՝ որպես հայոց դաժան ճակատագրի խորհրդանիշ: Չենք կարող չառանձնացնել նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մայրավանքի եկեղեցիները և, անշուշտ, Մայր Տաճարը,

որը առանձնահատուկ փայլ է ստացել վերջին նորոգություններից հետո:

Դիտարժան այս ցուցահանդեսը մի ուղերձ ունի. այս խառն ու անհանգիստ օրերին ներկայացնել մեր նախնիների կերտած աշխարհիկ ու հոգևոր ժառանգությունը, որ ոգևորելու է մեզ և հուսադրելու առաջիկա մարտահրավերներին դիմագրավելու գործում:

Հավելենք, որ հենց վերջերս Պոլսո հայոց պատրիարքարանի հովանավորությամբ լույս տեսավ Լևոն Լաճիկյանի «Պոլիսը հին և նոր» պատկերագիրը, որ եզակի է իր տեսակով. ընդգրկում է այդ հնագույն քաղաքի 100-ից ավելի գծանկար:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ



# ԱՐՄԵՆՆ ՈՒ ՏԱԹԵՎԸ...

Էջ 5 ←

Երեքամյա մեր կենտրոնը սաների առումով տարիքային սահմանափակում չունի, մեր գաղափարախոսությունն է՝ կերտենք ապագան միասին՝ դաստիարակելով նոր սերունդ: Ուզում ենք հավատալ՝ այն փոքր փոփոխությունը, որ անում ենք երեխաների կյանքում, կտա իր պտուղները: Նրանք մեզ մոտ ոչ միայն տիրապետում են ֆիզիկայի գիտելիքներին, այլև սովորում են հարգել միմյանց, պատասխանատու լինել իրենց արարքների համար, պայքարել, չընկճվել դժվարությունների հաղթահարման ընթացքից, մասնագիտական ճիշտ ընտրություն կատարել և այլն»:

Արմենն ու Տաթևն ապրում ու աշխատում են «անհնարին ոչինչ չկա» խոսքը գործի վերածելով: Նպատակների ու երազանքների իրագործման ճանապարհին էլ հույսը դնում են միայն սեփական ուժերի վրա: Նրանց մեծագույն երազանքներից է ունենալ շատ զավակներ:

Զրույցի վերջում ամուսինները հորդորում են զբաղվել ինքնաճանաչողությամբ, մոտ լինել բնությանը, դուրս գալ վիրտուալ իրականությունից կամ գոնե գտել մատուցվող ինֆորմացիան, օրը լցնել միայն դրական ու ապրեցնող լուրերով, հետաքրքիր ու զարգացնող նյութերով՝ հավատալով, որ այդ ամենն աճելու և հաղթանակներ գրանցելու հրաշալի ազդակ կդառնա:

Արփի ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ԱՐՑԱԽԻ ԷՋԸ ԹԵՐԹՎԱԾ ԶԷ...

Էջ 6 ←

Անհրաժեշտ է ամենօրյա պարբերականությամբ խոսել և հրապարակել օտարալեզու նյութեր հայկական մշակութային ժառանգության մասին: Համահայկական ամբողջ ներուժը պետք է միտված լինի նրան, որ առաջնային մանդատ ունեցող կառույցներ ոչ միայն արարողակարգային հայտարարություններով դատապարտեն Ադրբեյջանի մշակութային ցեղասպանությունը, այլև հստակ պատժամիջոցներ կիրառեն Ադրբեյջանի դեմ: Միայն իրական պատժամիջոցներով է հնարավոր որոշակիորեն հակազդելու Ադրբեյջանի պետական վարչակարգի կողմից իրականացվող մշակութային ցեղասպանությանը:

Մշակութային արժեքների դեմ իրականացվող հանցագործությունները ևս պարտադիր պետք է ներառվեն տարբեր դատական հայցերում՝ ընդդեմ Ադրբեյջանի: Արցախի մշակութային ժառանգությունը ամբողջականապես կպահպանվի այն դեպքում, երբ կվերադառնա գրվի Արցախը:

**«Հայկական լեռնաշխարհի մշակույթի օմբուդսմենի գրասենյակ»-ը ծրագիր ունի ընդգրկելու նաև մեր ամբողջ պատմական հայրենիքի հուշարձանների ճակատագրի հարցը: Որո՞նք են համարում այն ուղիները, որ գրասենյակը դառնա Արցախի ու հայի ծայրը ամբողջ աշխարհում:**

Գրասենյակի առաջնահերթ ծրագրերից ինչպես ամբողջ պատմական հայրենիքի հուշարձանների ճակատագրի հարցը, այնպես էլ Սփյուռքում գտնվող հայկական մշակութային ժառանգության հետ կապված հարցերը: Այս առումով ակտիվորեն համագործակցում ենք Սփյուռքի տարբեր կառույցների հետ և այդ համագործակցության շրջանակներում տարբեր ուսումնասիրություններ են կատարվում և ծրագրեր մշակվում, որոնց առավել մանրամասն առաջիկայում կանդրադառնանք:

Զրույցեց Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆԸ